



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՓԱՍՏԱՇԽՆԱՅԻ Ա. ՍԱՐԳԻՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԶ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՌՈ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵՑ Ս. ԹԱՐԳՎԱՆՉԱՑ ՆԱԽԱՏՈՆԱԿԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

Արդարե՛ւ հաւատքի եւ վկայութեան պատմական օր մըն եր Փաստինայի մեր հաւատացեալ ժողովուրդի կեանքեն ներս, Ս. Թարգմանչաց Վարդապետաց տոնի նախօրէին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ծնորհազարդ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին Ս. Սարգիս Եկեղեցւոյ ծուխին եւ հայ համայնքին տուած հովուապետական այցելութիւնը, Ուրբաթ, 7 Հոկտեմբեր 2011ի Երեկոյեան:

Եկեղեցւոյ մուտքին, Վեհափառ Հայրապետը, Գաւազանակիր Հայր Սուրբը եւ Նորին Սրբութեան ընկերացող Արեւմտեան եւ Արեւելեան թեմերու Առաջնորդները՝ Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Օշական Արք. Չոլոյեան, դիմաւորուեցան Գերշ. Եփրեմ Արք. Թապագեանին, Գերշ. Կորիւն Արք. Պապեանին, միաբան վարդապետ հայրերու, Եկեղեցական դասուն, Ազգ. Կերդ. Վարչութեան, Թեմիս Ազգ. Վարչութեան եւ միութենական ներկայացուցիչներու, բարերարներու, պետական անձնաւորութեանց՝ Զալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Անթընի Փորթաթիւնոյի, Փասատինայի քաղաքապետարանի խորհուրդի անդամ ճին Մետուսա, ոստիկանապետ՝ Ֆիլիփ Սանչեզի եւ բազմահարիւր հաւատացեալներու կողմէ:

Դպրաց եւ սարկաւագաց դասը, «Հրաշափառ» շարականին երգեցողութեամբ Եկեղեցի առաջնորդեց հայրապետական շքախումբը՝ Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտներն ու արենոյշները պատուի կանգնած եին, թափօրին մաս կը կազմեին կիրակնօրեայ դպրոցի աշակերտները:

Վեհափառ Հայրապետի հանդիսապետութեամբ, եւ հոգեւորականաց դասուն մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Երեկոյեան ժամերգութիւն եւ Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց նուիրուած նախատօնակի արարողութիւն:

Վրարողութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը պատգամ մը ուղղելով՝ վեր առաւ Թարգմանիչ Վարդապետներու մեզի կտակած մշակութային ժառանգութեան աւանդը ու հայ Եկեղեցւոյ Երակատարութիւնը հայ կեանքի հոգեւոր, մշակութային եւ ազգային

բնագաւառներէն ներս: Նորին Սրբութիւնը անդրադարձաւ Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդուն մեղանչական բնութեան ժխտական անդրադարձներուն եւ Քրիստոսով վերանորոգեալ այն կեանքին, որ աստուածահաճոյ է եւ քրիստոսակեդրոն, որ մարդս կը մօտեցնէ Աստուծոյ: »Եկեղեցին, ըսաւ Նորին Սրբութիւնը, Քրիստոսի խորհրդական մարմինն է, մենք՝ անոր անդամները: Եկեղեցւոյ գլուխը Քրիստոս է, որ իմաստ, նպատակ, խորք եւ տեսիլք կու տայ մեր կեանքին, ժամանակաւորք եւ հուսաւորք կը կամրջէ անհունին, կատարեալին ու Աստուծոյ: Եկեղեցին նիւթական շենք, կառոյց ըլլալէ անդին՝ հաւատացեալ ժողովուրդի հոգեւոր հաւաքականութիւն եւ ոգի է: Յայ Եկեղեցին իւրայատուկ է աշխարհի միւս բոլոր Եկեղեցիներէն, որովհետեւ մենք կ'օծենք Եկեղեցւոյ բոլոր սիւներն ու սպասները. Եկեղեցւոյ օծումով, մենք ալ որպէս հոգեւոր Եկեղեցի, կը սրբանանք, փրկութեան ընթացքի մէջ կը մտնենք: Մեր աստուածահաճոյ եւ ծառայական նուիրեալ կեանքով, երկրաւոր այս կեանքին կը քալենք երկնային թագաւորութիւն: Որպէս հաւատքի համայնք, Եկեղեցւոյ անդամները իրարու կապողը, օղակողը Քրիստոս է, որ Եկեղեցւոյ կեանքին ներս, հաւատքի առաքելութեան ճամբով, կեանքի կը կոչէ աստուածաշնչական սկզբունքներն ու բարոյական արժեքները: Յետեւաբար, հաւատքի եւ վկայութեան կեանքը, Խաչին խորհուրդով ապրիլ է եւ Քրիստոսը տանիլ ժողովուրդին կը նշանակէ:

«Եկեղեցին կը պայծառանայ ու կը շեննայ, երբ ժողովուրդ կայ: Տեսէք Կիրակնօրեայ դպրոցի այս մասնուկները. հաւատքով ու հոգիով թող մեծնան Եկեղեցւոյ մէջ, նոյնիսկ եթէ աղմկեն կամ անհանդարտ ըլլան: Եկեղեցին հայուն հոգեւոր տունն է, ու բանաստեղծին բառերով »մեր հոգիի ծննդավայրն է«: Երբ Եկեղեցւոյ մէջ չկայ ժողովուրդ, ձեր զաւակները Եկեղեցի չէք բերեր ու Եկեղեցւոյ շունչով չէք դաստիարակեր, ի՞նչ իմաստ ունին շըեղ Եկեղեցի եւ կառոյց ունենալը, երբ նստարանները դատարկ են, կամ՝ Եկեղեցի կու գանք միայն պարագայաբար: Եկեղեցի Եկէք, Եկեղեցւոյ կեանքին առաջնորդեցէք ձեր զաւակները, թող Եկեղեցւոյ շուրջին ներքեւ մեծնան, Աստուծոյ շնորհքով աճին ու մեր հայրերու շունչով հասակ առնեն, որպէսզի համայնական մեր կեանքին մէջ դրական եւ գործնական մասնակցութեամբ՝ օգտակար եւ հպարտութիւն առթող զաւակներ ըլլան, Եկեղեցին ու ազգը պայծառացնեն»:

Փասատինայի Ս. Սարգսի Եկեղեցւոյ ծխական համայնքի կեանքին ներս, Վեհափառ Յայրապետի օրինաբեր այցելութիւնը Աստուծոյ, Եկեղեցւոյ ու համայնական մեր կեանքին նուիրուելու հաւատքի հպարտառիթ նոր խայծ մը աւելցուց: Արդարեւ, Վեհափառը իր ոգեշնչիչ պատգամով, ո՛չ միայն առինքնեց մեր ժողովուրդը, այլեւ անդրադարձաւ Կիլիկիոյ Ս. Աթոռին ու անոր նուիրեալ միաբանութեան աստուածահաճոյ առաքելութեան, նաեւ վեր առաւ այն Եկեղեցանուեր եւ ժողովրդանուեր անփոխարինելի ծառայութիւնները, զորս ի սպաս կը դնեն մեր հայրենիքին, Ղարաբաղին եւ սփիւրքի մեր ժողովուրդին, ու կը սատարեն հոգեւոր, ազգային կեանքի աճին ու զարգացման:

«Պահպանիչ» աղօթքով, «Ի վեհ բարձանց» հայրապետական մաղթերգով եւ «Կիլիկիա» երգով վերջ գտաւ Եկեղեցական արարողութիւնը, որմէ Ետք, հաւատացեալ ժողովուրդը հերթով մօտեցաւ աշահամբոյրի,

ստանալու համար Վեհափառ Հօր օրինութիւնը: Ապա, Վեհափառ Հայրապետն ու շքախումբը ուղղուեցան Փասատիևայի Հայ Կեդրունը, Դպրեվանքի Սանուց Միութեան կողմէ ի պատիւ Վեհափառ Հայրապետին կազմակերպուած ճաշկերոյթին մասնակցելու:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I PRESIDES OVER EVE OF THE FEAST OF THE HOLY TRANSLATORS SERVICE AT ST. SARKIS CHURCH IN PASADENA

On the evening of Friday, October 7, 2011, His Holiness Catholicos Aram I presided over eve of the Feast of the Holy Translators services at St. Sarkis Church in Pasadena. Accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, and staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian, His Holiness was welcomed by H.E. Archbishop Yeprem Tabakian, H.E. Archbishop Gorun Babian, Central Executive and Executive Council members, members of sister organizations, California State Assembly member Anthony Portantino, Pasadena Police Chief Philip Sanchez and his wife, Pasadena City Council member Gene Masuda and hundreds of enthusiastic faithful.

With the singing of the "Hrashapar" hymn by the choir, His Holiness entered the Church, the aisles of which were lined by Homenetmen scouts. St. Sarkis Church Sunday School students were also part of the procession.

Eve of the Feast of the Holy Translators services then began, presided over by His Holiness and with the participation of Clergy members. At the conclusion of the service, His Holiness delivered his message to the faithful.

His Holiness exalted the legacy of our Holy Translator forefathers and the role of the Armenian Church in our spiritual, cultural, and national lives. Speaking on the sinful nature of man, His Holiness stated how we can be renewed and transformed from that life through our Lord Savior Jesus Christ and lead God-pleasing lives which draws us closer to God. "The Church is the symbolic body of Christ, and we our the members. The head of the Church is Jesus Christ, and it is through Him that our lives gain meaning, purpose, and depth". The Church is not merely a physical structure, it is the spirit of its faithful members, said His Holiness, and as a community of faithful, Church members are bonded together through Christ and through their faith mission evoke the principles and morals set forth in the Bible. To live a life of faith and witness means living in the spirit of the Cross and taking Christ to the people. The Church is edified by the people, it is our spiritual home and "the birthplace of our soul". What purpose does it serve if there is a beautiful Church but no people, stated His Holiness. Therefore, "come to Church, bring your children to Church, let them grow under the shadow of the Church and by the grace of God so that they develop into faithful servants of our Church and nation". His Holiness also reflected on the invaluable mission of the Catholicosate of Cilicia and its Brotherhood to the spiritual growth and nourishment of our people in Armenia, Artsakh, and the Diaspora.

The service came to a close with the benediction by His Holiness and the singing of the Pontifical and Cilician anthems, after which the faithful approached His Holiness to receive his blessings.